ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Ս. Շահումյան 4,
Garnihamaynq@mail.ru, հեռ. +37441125156

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 04

ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գողթ բնակավայրի հիմնական դպրոցի կառուցման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում

2024թ. հունիսի 10-ին ժամը 14:00-ին, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի տեղի ունեցավ Գողթի դպրոցի նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումը (1-ին փուլ):
Հանրային քննարկման մասին հայտարարությունը սույն թվականի մայիսի 8-ին տեղադրվել է Առավոտ օրաթերթում:

Ծրագրի անվանում՝ Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագիր:

Նախագծող կազմակերպություն՝ "Շին-Կոմֆորտ" ՍՊԸ

Ծրագրի իրականացնող կազմակերպություն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ),

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Տ. Պողոսյան	Գառնի համայնքի ղեկավար
Է. Ղարիբյան	Գառնի համայնքի Գողթ վարչական շրջանի ղեկավար
Վ. Կարապետյան	Գառնի համայնքի ղեկավարի տեղակալ
Հ. Գրիգորյան	Գառնիի համայնքապետարանի առաջատար մասնագետ
Վ. Աղդալյան	Շին-Կոմֆորտ ՍՊԸ-ի տնօրեն

Տ. Հայրապետյան Շին-Կոմֆորտ ՍՊԸ-ի գլխավոր ճարտարապետ

Ինչպես նաև ԿԳՄՍ-ից ներկայացուցիչներ, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից ներկայացուցիչներ, Կոտայքի մարզպետարանից մասնակից, «Լիլանարմ» ՍՊԸ-ից մասնակից, Գառնի և Գողթ համայնքի բնակիչներ և այլն:

Ելույթ ունեցան

Բացման խոսքով հանդես եկավ Գառնի համայնքի ղեկավարի տեղակալը և խոսքը փոխանցեց նախագծող կազմակերպության ներկայացուցիչներին:

Տ. Հայրապետյանը նշեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի իրականացվում է առաջին հանրային լսում: Ներկայացրեց նախատեսվող գործունեությունը, առ այն «Մինչև 2026թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոց» ծրագրի շրջանակներում իրականացվելու է 432 աշակերտի համար նախատեսված դպրոց, որը տիպային դպրոց է և իրականացվելու է տեղակապում: Շինարարության ընթացքում դպրոցը չի քանդվի, քանի դեռ նոր դպրոցը չի կառուցվել: Հին դպրոցը կքանդվի, որի տարածքում իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ: Դպրոցի հատակագծային լուծումներում հաշվի են առնված սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, ադմինիստրատիվ մասնաշենքեր, նոր կաթսայատուն, բացօթյա մարզահրապարակ: Նախատեսված է նկուղ, որը կծառայի նաև որպես ապաստարան: Բաղկացած է լինելու երկու մասնաշենքերից, որոնք միացված են լինելու դեֆորմացիոն կարով:

Դպրոցի հատակագծային լուծումներում հաշվի են առնված սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, ադմինիստրատիվ մասնաշենքեր, նոր կաթսայատուն, բացօթյա մարզահրապարակ: Ելնելով դպրոցի ֆունկցիոնալ կառուցվածքից՝ հիմնական բոլոր մասնաշենքերում նախատեսված են առանձին մուտքեր:

Մասնակիցները բարձրաձայնեցին իրենց հարցերը

1. **Հարց:** Ինչ սկզբունքով է ընտրվել թե քանի տեղանոց է լինելու դպրոցը
   Պատասխան: ՀՀ կառավարության որոշման համաձայն, ըստ բնակչության քանակի և գործող դպրոցի աշակերտների քանակի:
2. **Հարց:** Ապաստարանը մեկ հոգու հաշվարկով 1.5քմ է, բավարար է տարածքը?
   Պատասխան: Այո, 600 քմ-ից ավել է:
3. **Հարց** Ինչպես են հեռացվելու կեղտաջրերը:
   Պատասխան: Քանի որ չկա կեղտաջրերի հեռացման համակարգ, նախատեսվում է բիոլոգիական մաքրման կայան կառուցել:

Հանրային քննարկման ավարտին նշվեց, որ արձանագրությունը, մասնակիցների ցանկը և տեսաձայնագրությունը կտրվի 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Գառնի համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյան

Գողթ վարչական շրջանի ղեկավար՝ Է. Ղարիբյան

Զեռնարկող Շին-Կոմֆորտ ՍՊԸ տնօրեն Վ. Աղդալյան

Ներկայացրեց Շին-Կոմֆորտ ՍՊԸ գլխավոր ճարտարապետ Տ. Հայրապետյան

Հանրային քննարկման պատասխանատու Գառնի համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Կարապետյան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով